կարում ունի: Նոյն ձեւով կարող են արտաբերուիլ բոլոր հարցական ձեւերը. ո՛վ էր գլխից ձեռ վեր կալած (Յ. Թումանեան): Ո՛ւր է թէ մի տեսնեմ եւ այլն: Երբ ասում ենք «երկար ձայնաւոր»՝ պէտք է հասկանալ այս վերջին տեսակը, որ ոչ թէ ճեղքուած է, այլ անվթար:

Այս վերլուծութեան հիման վրայ կարող ենք ասել, որ ձայնաւորն իր տեւացման ընթացքին կարող է ճեղքուիլ եւ շեշտ առնել իր երկու տարբեր կէսերի վրայ, իսկ երբ նա պարզապէս երկար է, այն ժամանակ նա սկսում է մի ծայրից եւ կոր գծով իջնում է վար: Ուշադիր դիտողը կը նկատէ, որ երկար ձայնաւորը կարող է հոսանուտ եւ անընդհատ ընթացքով իջնել վար, բայց նոյն ձեւով անկարող է վեր բարձրանալ: Ձայնաւորի անկումը սահուն է եւ անընդհատ, իսկ բարձրանալը կայաններով եւ ընդհատ: Լաւ դիտողը կը նկատի նաեւ, որ շեշտը կարծէք պոկում է ձայնաւորի գլուխը, թողնելով, որ մնացորդը կոր գծով սահի վար: Այս դէպքում է, որ նայած շեշտի զօրութեան՝ ձայնաւորն աւելի կամ պակաս չափով զգացնում է իր ճեղքը: Երկար ձայնաւորը կարող է ե՛ւ շեշտ ունենալ ե՛ւ չունենալ. շեշտը կապ չունի երկարութեան հետ:

Եթէ հիմա փորձէք արտաբերել մի երկար ի՛, դուք կը նկատէք, որ չնայած ձեր դիտակից ճիգին՝ երկար ու նոյն գծով վարելու ձայնի արտաբերութիւնը, ձեր ծնօտները վերջապէս յոգնում են ու գալիս իրար եւ ձայնը գծում է մի կոր ընթածիր, որ անցնելով յ-ի կայանից հասնում է ը-ին, որ բոլոր ձայնաւորների հանգստեան խշտին է եւ թաղման դամբարանը: Մեր բոլոր ձայնաւորները նախ թմրում են իբր ը եւ ապա չքանում: Երկար ի-ի անցած ուղին կարելի է այսպէս գծել. — ի՛—յ—ը:

Հիմա առնենք «ցորեան» բառը: Ենթադրում եմ, որ նա մի հին «ցորիան» է, ուր ի-ն երկար էր եւ անշեշտ: Այս բառը կարող էր շեշտուել կամ իբր ցո՛րեան (արեւելեան շեշտաւորութիւն) կամ իբր ցորեա՛ն (արեւմտեան շեշտաւորութիւն): Մեր վերականգնած ձեւն այսպիսով կարող էր ունենալ երկու տարազ, որ մենք զուգադրում ենք.

ցո՛րի՛ան ⏑ ⏑ —
ցորի՛ա՛ն — ⏑ ⏑

Երկար ի-ն հասնելու համար յաջորդ ա-ին անցնում է իր ընթածիրի մի մասը, մինչեւ յ-ի կայանը եւ միանում հետեւորդ ա-ին եւ բառի արտաբերութիւնն ստանում է այս կերպարանքը.

ցո՛րի͡յան — իյա
ցորի͡յա՛ն — իյա՛

Երկու դէպքում եւս մենք ստանում ենք արտաբերական միեւնոյն խումբը՝ իյա, որ հնչւում է իբր i̯ya: Արտաբերական այս խումբն է, որ տառադարձուած է իբր եա: Այսպիսով ճիշտ է, որ եա խումբը մի նախաւոր իա է, բայց մի իա, ուր ի-ն երկար էր եւ անշեշտ: Երկար ի-ն իր մի թեւը տալիս է հետեւորդ ա-ին եւ ստեղծում է իյա խումբը, որ հնչւում է i̯ya եւ տառադարձւում եա: Այս հիման վրայ մենք կարող ենք ձեւակերպել ձայնակազմութեան երկու տարազ.

ի՛ա > իյա > եա	īa > i̯ya > ya
ի՛ա՛ > իյա՛ > եա՛	īá > i̯yá > yá

Այս երեւոյթը մեկնելու համար կարող է մէկը փորձուիլ յօրինելու մի ուրիշ տեսութիւն, ասելով թէ ե-ը մի հին իա է, ուր ա-ը գոց էր, իբր ä, իսկ եա-ն մի հին իա է, ուր ա-ը բաց էր իբր a. եւ ուրեմն՝ iä > ե, իսկ ia > եա: Մենք խկոյն կը տեսնենք, որ այդ տեսութիւնը սխալ կը լինէր:

—

Ստուգենք մեր տեսութիւնը այնպիսի օրինակի վրայ, ուր եա խումբը արդիւնք չէ երկար ի-ի, թէեւ տառադարձումն է իյա խմբի: Մենք ունինք մրջիւն բառը, որի սեռականն է մրջեան: Ահաւասիկ մի բառաձեւ, ուր գտնում ենք մի եա: Ի՞նչն է այդ խմբի ծագման պատճառը: Մեր տեսութեամբ եա խումբը, ինչպէս տեսանք, ծագում է իյա խմբից: Տեսնենք այդպէ՞ս է «մրջեան» ձեւի մէջ: Միեւնոյն բառը մենք ունինք եւ մրջիմն ձեւով, որի սեռականն է մրջման: Մեր տեսութեամբ երկու բառերի վերջին ւն եւ մն վանկերի մէջ սղած է մի հին ձայնաւոր. սեռական ձեւերը ցոյց են տալիս, որ այդ ձայնաւորն եղած է ա: Վերականգնելով սղած ձայնաւորը, մենք կը ստանանք երկու ձեւ — *մրջի՛ւան եւ *մրջի՛ման: Այս ձեւերը մեր տեսութեամբ թէ սեռական էին եւ թէ ուղղական. հոլովները տարբերւում էին միմիայն տարբեր շեշտաւորութեամբ. այսպէս.

*մրջի՛ւան > մրջի՛ւըն > մրջի՛ւն } ուղղական.
*մրջի՛ման > մրջի՛մըն > մրջի՛մն }
*մրջիմա՛ն > մրջ(ը)մա՛ն > մրջմա՛ն — սեռական:

Զուգադրելով երկու նախաւոր ձեւերը՝ *մրջի՛ւան — *մրջի՛ման. մենք կը տեսնենք, որ մի ձեւի մ-ը միւս ձեւի մէջ փոխարինուած է ւ-ով: Կարծում եմ, երկու ձեւերից հնագոյնը մ ունեցող ձեւն է: Մենք կարող ենք ձեւակերպել փոխարինման պայմանը, ասելով թէ մ-ը երկու ձայնաւորի միջեւ եւ շեշտից յետոյ «դարձած» է ւ. -ի՛ման > -ի՛ւան, որից ծագում են՝ -ի՛մն > -ի՛ւն:

Մենք տեսանք, որ մրջիմն ձեւն իր սեռականը կազմում է շեշտի տեղափոխութեամբ. նոյն ձեւով կազմում է նաեւ մրջիւն ձեւը: Զուգադրելով այս ձեւի վերականգնած

†

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կը սգայ Այրարատեան դաշտը. Թուխով համակած է Մասիս իր սպիտակափառ գագաթը. Կ'ողբայ համայն Հայութիւնը, որովհետեւ զրկուած է Հովուապետէն Հայաստանեայց Եկեղեցին:

Մայիս 8ին ի Տէր հանգեաւ Գէորգ Ե. վշտալի Կաթողիկոսն Ամենայն Հայոց (ծնած 28 Օգոստոս 1847, Եպիսկոպոս օծուած՝ 9 Մայիս 1882, Կաթողիկոս ընտրուած՝ 13 Դեկտեմբեր 1911, օծուած՝ 1 Յուլիս 1912):

Յուսալից էին իր կաթողիկոսութեան առաջին տարիները. Էջմիածնի Մայր Աթոռը շէն էր եւ բազմամբոխ. խաղաղութեան օրերուն կը բարգաւաճէր Ազգը բարոյապէս եւ տնտեսապէս. հայ ոգին կ'ապրէր զարթնումի դարը, որ կ'արտայայտուէր կրթական յաջողութիւններու առթիւ, ամէն տեղ՝ հպարտ գիտակցութեամբ: Նոր Հովուապետի հովանոյն ներքեւ կ'ակնկալուէր զուարթ միջօրեայն պայծառ արշալոյսէն ետքը:

Բայց խռովցան սեւաթոյր ամպերը Մասեաց գագաթին. եւ ամփոփեց արեգակը իր ճառագայթները Հայաստանի վրայէն: Լացի եւ կոծի ձայներ հնչուեցան հայ կուրծքերէն:

Համաշխարհային պատերազմի արհաւիրքները ցնցեցին հայութիւնը իր խաղաղ յարկին ներքեւ. հրշէկ ամպերը խորտակեցին երդիքները. եւ հողմայոյզ մրրիկը ցան եւ ցիր ըրաւ հայ ժողովուրդը, վտարանդի իր յարկէն, հուրի եւ սուրի առ եւ աւար:

Գէորգ Ե. ականատես եղաւ հարուածին:

Գաղթականներ եւ փախստականներ, հազարաւոր եւ բիւրաւոր, հայաբնակ վայրերէն խուժեցին մերկ եւ բոկ դէպի Հովուապետը հայ ժողովուրդին:

Եւ Գէորգ Ե. խառնեց արիւնոտ հեղեղներ արցունքի՝ արեան եւ վշտի ծովուն մէջ:

Այրիներ եւ որբեր սովալլուկ, վշտահար՝ հաց եւ մխիթարութիւն հայցեցին Հայոց Հայրիկէն:

Եւ Գէորգ Ե. բացաւ շտեմարանները հայութեան՝ ջամբելու հացիկ սովեալին, ապաստան անպատսպարին, հովանի որբուկին: Ամէն հայ իր բաժինը ըրաւ, ամէն հարուածեալ իր մխիթարութեան պատառը գտաւ:

Նա եղաւ վշտալի Կաթողիկոս Ամենայն Հայոց: Լացաւ լացողներու հետ. խրախոյս ներշնչեց ընկճուածին. բողոքեց անիրաւութեան դէմ: Ըրաւ նա այն, ինչ կը պահանջէր իրմէ Հովուապետի պաշտօնը:

Տասն եւ հինգ տարիներ տեսաւ նա լալագին աչքերով լեռներու եւ ձորերու մատնուած, աշխարհէ աշխարհ թափառական՝ իր հօտը, հովուազուրկ՝ ժողովուրդը, կողոպտուած իր զաւակներէն՝ Եկեղեցին: Մարդկութեան բարբառը հնչեց ազդեցիկ մարդկանց սրտերուն մէջ. ու գնաց հայցելու երկնաւորին ողորմութեան ձայնը, շարժելու լեռներ, կակղելու ապառաժներ:

Հանգիստ եւ երկնային մխիթարութիւն վշտալի Հանգուցելոյն ի Քրիստոս:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»ի:

1

© National Library of Armenia